Բոգդան Բ. Աթանեսյան[1]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՎԱՐԱԾ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ[2]

2024 թ. փետրվարի 28-ին ԱդրՀ Միլլի Մեջլիսի նիստում բնական ռեսուրսների, էներգետիկայի և էկոլոգիայի խորհրդարանական հանձնաժողովի նախագահ Սադիգ Գուրբանովը հայտարարել է, որ Կուր գետով Ադրբեջան մտնող ջրի մեծ մասը Վրաստանի և Հայաստանի կողմից աղտոտված է[3]:

Գուրբանովի խոսքով, Հարավային Կովկասի ընդհանուր ջրային պաշարների 62%-ը բաժին է հասնում Վրաստանին, 28%-ը՝ Հայաստանին և ընդամենը 10%-ը՝ Ադրբեջանին: *«Կուր գետը Ադրբեջանի բնակչության խմելու ջրի հիմնական աղբյուրն է»,* – ասել է պատգամավորը և դժգոհություն հայտնել, որ այդ ջրերը մշտապես աղտոտվում են իրենց հարևանների կողմից: Գուրբանովը նաև ընդգծել է, որ, ըստ կանխատեսումների, մինչև 2040 թ. ադրբեջանական բոլոր գետերի ջրի պարունակությունը նվազելու է 15–25%-ով: Նրա խոսքով, Հարավային Կովկասում ջրային-էկոլոգիական հավասարակշռության պահպանման խնդիրը բարդանում է նրանով, որ Վրաստանն ու Հայաստանը դեռ չեն միացել Շրջակա միջավայրի պահպանության միջազգային կոնվենցիային:

Գուրբանովի հայտարարությունները և, ընդհանրապես, Միլի Մեջլիսում հարևանների բնապահպանական *«անօրինությունների»* թեմայով քննարկումները հազիվ թե պատահական լինեն: Այս առումով հարկ է հիշել Հայաստանի հանքավայրերի քարտեզը կազմելու Ադրբեջանի կառավարության վերջին նախաձեռնությունը, իբր որոշելու և գնահատելու հայկական լեռնահանքային արդյունաբերության թափոններով Ադրբեջան թափվող գետերի և առուների աղտոտվածության աստիճանը, որոնք անուղղելի վնաս են հասցնում դրա էկոլոգիային[4]: Ըստ Ադրբեջանի քարտեզագիրների հասարակական

---

[1] Հրապարակախոս, վերլուծաբան, վավերագրող ռեժիսոր: Հեղինակ է ավելի քան 1000 լրագրողական և քաղաքական-վերլուծական հոդվածների և 400 հեռուստատեսային վավերագրական տեսահոլովակների: Աշխատել է «Հ1», «ԱՐ», «Երկիր Մեդիա» հեռուստաընկերություններում: Նա համագործակցել և եղել է «Голос Армении», Aysor.am, Voskanapat, «Ազատ Արցախ» և այլ պարբերականների ու լրատվական կայքերի թղթակից:

[2] Հոդվածը բերվում է թարգմանաբար՝ ռուսերենից: Բնագիրը խմբագրություն է ներկայացվել 03.03.2024 թ.:

[3] Haggin.az. (28.02.2024), «Ադրբեջանն ունի ամենաքիչ ջրային պաշարները» (ռուս.), https://m.haqqin.az/news/309421 (բեռնման օրը՝ 03.03.2024):

[4] Verelq. (02.02.2024), «Ինչպես է Ադրբեջանը «երախտիքը» հայտնել Հայաստանին COP29-ը հյուրընկալելու հնարավորության համար» (ռուս.), https://verelq.am/ru/node/140053 (բեռնման օրը՝ 03.03.2024):

ասոցիացիայի նախագահ Մուգաբիլ Բայրամովի, նշված քարտեզն ամբողջությամբ կազմված կլինի ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի (COP-29) Մասնակիցների խորհրդաժողովի 29-րդ նստաշրջանի նախօրեին և գրքույկի տեսքով կբաժանվի մասնակից-երկրների բոլոր պատվիրակներին:

Այսպիսով, տպավորություն է ստեղծվում, որ Բաքուն կանխամտածված քարոզչական արշավ է սկսում Վրաստանի և Հայաստանի կողմից «էկոլոգիական խախտումների» ծավալուն դոսյե ստեղծելու համար՝ մոտ ապագայում դրանց դեմ պահանջներ ներկայացնելու նպատակով: Տարածաշրջանի բնակլիմայական միջավայրի նկատմամբ հարևանների *«անփույթ»* և նույնիսկ *«հանցավոր»* վերաբերմունքը բացահայտելու համանման նախաձեռնությունները ժամանակի ընթացքում միայն կբազմապատկվեն և, ի վերջո, կհավաքվեն «ստվարածավալ թղթապանակում», կներկայացվեն Բաքվում կայանալիք ՄԱԿ-ի 29-րդ բնապահպանական խորհրդաժողովում: Խոսքը մի միջոցառման մասին է, որի անցկացման իրավունքը Ադրբեջանը 2023 թ. դեկտեմբերի սկզբին կորզեց Հայաստանից շանտաժի և 32 հայ զինվորականներին գերությունից ազատելու առաջարկի միջոցով[5]: Բաքուն մտադիր է COP-29 վեհաժողովին ներկայանալ՝ որպես բնապահպանական *«անօրինության»* և իր հարևանների՝ Վրաստանի և Հայաստանի կողմից կենսական նշանակություն ունեցող բնական ռեսուրսների անվերահսկելի օգտագործման զոհ և, միևնույն ժամանակ, որպես տարածաշրջանային կենսոլորտի խաթարված հավասարակշռության վերականգնման պայքարի գլխավոր ջատագով: Եվ դա այն դեպքում, երբ, ըստ էության, օբյեկտիվ տվյալներով, հենց Ադրբեջանն է անվիճարկելի առաջատարը տարածաշրջանի արդյունաբերական և կենցաղային աղտոտման, դրա երկրաբանական, ջրային և մթնոլորտային հատվածների թունավորման հարցում: Մենք արդեն քննարկել ենք, թե ինչպես է Ի. Ալիևի վարչակարգը, ոսկի արդյունահանողների միջազգային խոշոր խմբավորման հետ համատեղ կոռուպցիոն սխեմաների միջոցով անխնա շահագործում Ադրբեջանի ընդերքը՝ առանց այդ տարածքը կանաչապատելու որևէ ծրագրի, և աշխարհի երկրների բնապահպանական վարկանշային ցանկում որտեղ է գտնվում Ադրբեջանը՝ պայմանավորված կասպիական ծանծաղուտների և Ապշերոնյան թերակղզու ընդհանուր աղտոտվածությամբ, ինչի մասին խոսվել է մեր նախորդ հոդվածներից մեկում:

COP-29 վեհաժողովի նախօրեին Ադրբեջանին անհրաժեշտ է շտապ վերականգնել իր իմիջը և շտկել երկրում էկոլոգիական իրավիճակի աղետալի անկման ցուցանիշները, և ակնհայտ է, որ Բաքվում նման վերականգնման հիմնական ճանապարհը համարում են

[5] Armenia Today. (07.12.2023), «Երևանը և Բաքուն հայտարարել են 32 հայ և 2 ադրբեջանցի գերիների ազատ արձակման համաձայնագրի մասին» (ռուս.), https://armeniatoday.news/region-ru/688356/ (բեռնման օրը՝ 03.03.2024):

ոչ թե քաղաքական կամքի դրսևորումը և իրենց երկրում այս ոլորտում կարգուկանոնը վերահաստատելու գործնական միջոցառումների նախաձեռնումը, այլ՝ անհիմն մեղադրանքները հարևանների հասցեին, նսեմացնելով նրանց բնապահպանական պատկերը և ցույց տալով իրենց սեփական՝ շատ կասկածելի, արժանիքներն այս ոլորտում:

Միևնույն ժամանակ, մոլորություն կլիներ համարել, որ COP-29 համաժողովի համատեքստում Բաքվի գլխավոր խնդիրը հարևանների հետ մրցակցության մեջ իր դիրքերի օպտիմալացումն ու Ադրբեջանի՝ որպես սոցիալական, տնտեսական և բնապահպանական գրավչություն ունեցող բարեկեցիկ երկրի, բարենպաստ իմիջի կերտումն է: Ընդհանուր առմամբ, Բաքվի շարժառիթների մեջ կա թիրախային տարր: Բայց սա Ալիևի վարչակարգի համար միայն տեսանելի խնդիրն է և ոչ՝ ամենաէականը:

Շատ ավելի տրամաբանական է թվում ենթադրել, որ, իրականում, Բաքուն, օգտագործելով վեհաժողովի հարթակը և օրակարգը, պատրաստում է միջազգային ասպարեզում անհրաժեշտ գաղափարական և իրավական հիմքեր՝ հարևաններին ներկայացվող իրենց պահանջները զուտ բնապահպանական հետաքրքրության տարածքից տեղափոխելու քաղաքական հարթություն: Նկատվում է հարևան երկրներից Ադրբեջանը սնուցող գետերի աղտոտվածության և ծանծաղուտի հարցը քաղաքականացնելու, ինչպես նաև այս հարևան պետությունների հանքային պաշարների, իբր, էկոլոգիապես վնասակար շահագործման հարցը: Խոսքը Վրաստանի և Հայաստանի նկատմամբ Ադրբեջանի տարածքային հավակնությունների օրինականացման նպատակով նոր նարատիվ սկսելու մասին է, որը Բաքուն կարող է ժամանակին բացահայտ ներկայացնել՝ բնապահպանության և սոցիալական հարցերի ոլորտում միջազգային իրավունքի համընդհանուր նորմերին համապատասխանելու հայտարարված անհրաժեշտության քողի ներքո: Մասնավորապես, կարելի է ենթադրել, որ Բաքուն մտադիր է աճպարարությամբ ձեռնամուխ լինել 2010 թվականին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված «Ջրի իրավունքի մասին» բանաձևի ձևակերպմանը, ըստ որի՝ յուրաքանչյուր ոք անձնական և կենցաղային կարիքների համար բավարար քանակությամբ ջրի հասանելիության իրավունք ունի[6]: Տվյալ դեպքում խոսքը կարող է լինել «Կայուն զարգացման նպատակ 6» (SDG 6) բանաձևի մանիպուլյատիվ մեկնաբանության մասին, ըստ որի՝ երկրները պետք է համագործակցեն միմյանց հետ՝ բոլոր պետությունների համար ջրի հասանելիությունը չսահմանափակելու և խմելու ջրի հանրային օգտագործման աղբյուրների մաքրությունը պահպանելու հարցում: Այսպիսով, Ադրբեջանը, վկայակոչելով իր ջրային ռեսուրսների սակավության, Վրաստանի և Հայաստանի կողմից Կուր և Արաքս գետերից *«իռացիոնալ»* ջրառի, այդ

[6] Ջրային պաշարներ / Միավորված ազգերի կազմակերպություն (ռուս.), https://www.un.org/ru/global-issues/water (բեռնման օրը՝ 03.03.2024).

մեծ ջրային զարկերակները սնուցող աղբյուրների և գետերի *«կանխամտածված աղտոտման»* մասին քարոզչական ուղեկցությունն ակտիվորեն օգտագործելով, կփորձի կերտել ևս մեկ «օրինական» պատճառ՝ հարևանների և, առաջին հերթին, Հայաստանի նկատմամբ ագրեսիվ գործողությունների և տարածքային պահանջների համար:

Ադրբեջանում խմելու և ոռոգման ջրի աղետալի իրավիճակի քարոզչական նկարագրումը, ինչպես նաև տեղեկատվական միջավայրում ներկա փուլում շարունակվող մի շարք «լցոնումները» հուշում են, որ Բաքուն, մասնավորապես, հող է նախապատրաստում Սևանա լճի հարցը կտրուկ ձևով մտցնելու միջազգային օրակարգ՝ պնդելով, որ այս ջրային ավազանը քաղցրահամ ջրի ամենամեծ բնական ջրամբարն է հսկայական տարածաշրջանում, և որ դրա ջրային պաշարները ենթակա են *«արդար բաշխման»* տարածաշրջանի բոլոր *«կարիքավոր»* երկրների միջև:

Այս համատեքստում հարկ է նշել, որ միջազգային իրավունքը և ՄԱԿ-ի համապատասխան բանաձևերը չեն նախատեսում ջուրը և ջրային աղբյուրները որոշ երկրներից՝ հօգուտ մյուսների «խլելու» հարկադիր գործողություններ, սակայն այս դեպքում ուժով ագրեսիա իրականացնելու համար Ադրբեջանը կարող է բավարարվել բացառապես հղումներ կատարելով ՄԱԿ-ի բանաձևերի բարոյագաղափարական ելակետներին և իր կողմից կատարված «լուսավորչական ու քարոզչական» աշխատանքի ընդարձակ հենքին: Միջազգային իրավունքի և դրա իրականացման մեխանիզմների այսօրվա համընդհանուր լճացման պայմաններում Բաքվին կարող է թվալ, որ նկարագրվածը լիովին կբավարարի հարևանների դեմ «ջրային-էկոլոգիական» ագրեսիայի իրականացման պարագայում իրավական և բարոյական պատասխանատվությունից խուսափելու համար: